ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

21.06.2017թ. N

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ և ցանկանում, որ հասարակության համար կարևորագույն նշանակություն ունեցող Ձեր առաքելությունը մշտապես ընթանա հաջողություններով:

Տոնական շնորհավորանքներին զուգահեռ անհրաժեշտ է դարձյալ ընդգծել բուժաշխատողների կողմից իրականացվող գործառույթների բոլոր նշանակալի դրսևորումները, որոնք բացառապես միտված են մեր ազգաբնակչության առողջության պահպանմանը և արժանի են ամենայն հարգանքի:

Բուժաշխատողի մասնագիտական տոնի շրջանակներում ևս պետք է փաստենք, որ մեր երկրում իրականացվող քաղաքականության արդյունքում ներկայումս նոր որակ և նոր մոտեցումներ են հաղորդվում առողջապահության ոլորտի զարգացմանն ու կատարելագործմանը:

Թո՛ղ որ, համակարգի արդյունավետության բարձրացմանը միտված բարեփոխումները նորովի լիցքեր հաղորդեն նաև բուժաշխատողների գործունեությանը և նպաստեն որակյալ ու պատշաճ բուժսպասարկման ապահովմանը:

Կրկին շնորհավորելով՝ ցանկանում եմ, որ առողջապահության համակարգի բոլոր աշխատակիցների առօրյան նշանավորվի դրական զարգացումներով, ձեռքբերումներով և Ձեզ մշտապես ուղեկցեն անձնական ու աշխատանքային հաջողությունները:

Հարգանքներով

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ